



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U. S. S. R.

4250151

001

0 0 0 0

01

0 0 0 0

891-99

4-75

001

1 9 2 3

1947
ԱԶԱՏ ՎՃՏՈՒՆԻ

ՀՈՒԶԱՆՔ

Լ ԶԱՆՔ

1 9 2 3

Ա Լ Ե Ք - Պ Ո Լ


ԱՎԱԳ ԸՆԿԵՐ

ՀԱԿՈՒ

ՀԱՆՈՐԹՅԱՆԻՆ

ՆԱԻՐՈՒՄ Ե

ՀԵՂԻՆԱԿԸ



1004-11

ԲԱՑ ՆԱՄՄԱԿ ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆԻՆ

Մի Դանթե՞,

կամ թե

Պոլլիսն ես դու. —

չե՛, ի՛մ ընկեր,

աչեղի ուժգին ես դու...

Քո յերգո՛ւմ՝

ըմբոստ հերքո՛ւմ հնի ..

քո յերկրո՛ւմ՝

ճիշ ու բերկրո՛ւմ հիմի...

Աշխարհի ամեն մասո՛ւմ՝

ցասո՛ւմ.

նոր կյանքի խոսքն ես ասում
հիմի:

փորեն չ ես,
շեփորեն չ ես
արտեր.

յեւ անէ
ու վառեն չ ես հիմի...

քո կանչում
դողանցում են որեր...
ու նորեր
քեզ են նայում հիմի..

Ազատ վառում

ՋԱՆԳՅԱՐ

Վեր,

զանգհար,

վեր

աշտարակի բարձր կրտուր

ու զանգը տհւր,

զանգը տհւր:

Հուր հեանքով

և հանգով

դու զանգը

զարկ,

զանգը

զարկ.

ու զանգը

զարկ,

զանգը
զանկ:

Թող զըրընգան
ու զընգան
զարթոնքի զանգը զընգան, —
զորականչի զանգը զիլ:

Յեւ հուզանքով
ու զանգով
յեզերքներից մինչ յեզերք՝
Թող զըրընգան տիեզերք:

Ուր է աշխարհը հիմա: —
Մոլոր է աշխարհը հիմա.
հուզանք
ու զանգ է հիմա,
հոլոր է աշխարհը հիմա:

Զանգ զըրընգան
ու զընգան,

զըրընգան զիլ և ամսւր՝
 ուր կա քրտինք,
 ուր կա մսւր.

կանչիր,
 գանչիր,
 դողանջիր,
 թող վնաս չեղնեն
 ամենսւր:

Զանգնար,
 արագ,
 ավելի,
 զանգնար
 արագ,
 ավելի,
 թեկիդ ուժ տուր,
 զանգը տուր.
 սեին գո՛ւժ տուր,
 զանգը տուր:

Արագ,
 արագ

ափեղի,

դու զանգը

զանգը,

զանգը

զանգը.

ու զանգը

զանգը,

զանգը

զանգը:

◁—▷

1919

ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ

Աշխարհի ուղիներն ամեն՝
մրրիկ են կարմիր, շառաչ,
աշխարհի ուղիներն ամեն՝
փռվել են վազքիս առաջ:

Կանչում են մրրկող ձայներ,
կանչում են դեպի հեռուն.
Կանչում են մրրկող ձայներ
դեպ կյանքը հորդ և յեռուն:

Նժույգն իմ բոցահեր, հրե.
հայացքն իր—հեռվի կարուս.
Նժույգն իմ բոցահեր, հրե,
թռչում է ճամփից քարուս:

Յեվ հոգիս ողարկված ամուր
 ամբակին շանթող՝ նրա,
 և հոգիս ողարկված ամուր
 թռիչքին քանդող՝ նրա:

Ու նստած նժույգիս քամկին,
 բոցավառ կերոն ձեռքիս.
 ու նստած նժույգիս քամկին,
 հզոր հունչ կուտամ յերգիս:

Սոյանքով սրընթաց—ռադիո՝
 թռչում եմ. յեթե ուղեմ
 խոյանքով սրընթաց—ռադիո՝
 կարող եմ աշխարհ հուզեմ:

Աշխարհի ուղիներն ամեն՝
 մրրիկ են կարմիր, շառանչ.
 աշխարհի ուղիներն ամեն՝
 փռվել են վազքիս առաջ:

ԴԱՐԲԻՆՆԵՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Դարբիններ ենք մենք,
տխտան ենք հիմի.
արփիններ ենք մենք,
հզոր ենք ի մի:

Թող զընդան ուժգին պողպատ մուրճը մեր,
Թող կայծերը շեկ փռվեն շուրջը մեր.
մեր թևերը՝ պիրկ, մեր կամքը՝ ամուր,
կոմունան յենք մենք աշխարհով հանուր:

Դե, զարնենք սալին, հալալ մեր կաթը,
դե, ծեծենք արագ կարմիր յերկաթը.
մեր մուրճի զարկով համաշափ, մեկ-մեկ՝
արևներ փռենք աշխարհում հեզ-մեզ...

Դարբիններ ենք մենք,
տիտան ենք հիմի.
արփիններ ենք մենք,
հզոր ենք ի մի:

Աշխարհի թոքին մենք շունչ ենք տվել.
կյանքին նոր անիվ ու հունչ ենք տվել.
ամեն մի զարկեն մեր հզոր մուրճի՝
Խեղճորդ Ալիքն ահավոր կ'ուռչի:

Արևի նման՝ յերկնքի ծոցում՝
աշխարհի հսկա հնոցն ենք բոցում.
փչենք փուքսերը, վառենք բոլր հնոց,
աշխարհը շինենք մի մեծ դարբնոց...

Դարբիններ ենք մենք,
տիտան ենք հիմի.
արփիններ ենք մենք,
հզոր ենք ի մի:



ԲԱՂԱԲ

Ահա

մի աժդահա:

Նայիր, ըզգահ, ըզգահ,

քաղաքն ե սա հակա՝

հազար յերանգներով.

հազար յերակներով,—

փողոց, փողոց, փողոց,

փողոց, փողոց, փողոց:

Զգված հեռվից հեռուն՝

ահա

մի աժդահա

քաղաքը սա յեռուն:

Քաղաքը սա տիտան,
 հոսանք,
 հուզանք
 ու զանգ,
 շոգի յերկաթ և քար.
 ահա
 մի աթղահա
 ձգված, փռված յերկար:

Լամբեր ելեկտրովառ,
 ասես՝ յերկրի ծոցում
 աստղեր, աստղեր, աստղեր.
 քաղաքը՝ հուր — հրաշք,
 քաղաքը՝ հուր — բոցում, —
 վորպես մի նոր հրաշք...


Շոքի, — հոգի, պողպատ,
 շողպատ մեքենաներ.
 անիվ, անիվ, անիվ
 անիվ, անիվ, անիվ
 բանող, մանող, հանող
 անիվ, անիվ, անիվ.
 շոքով, փոկով, թոկով

անհաղթ հզոր հոգով
 բանում, մանում, հանում,
 բառնում են ու տանում
 դառնում են ու տանում՝
 յերգեր, բերքերը բյուր
 մոտիկ, հեռու յերկիր...
 հեռու
 սուլում,
 ձուլում,
 ձուլում են մեղ իրար՝
 ինձ—քեզ, քեզ—ինձ՝ նրան...

Շտապ, արագ, տենդով,—
 յես—դու, դու—նա ու նա
 խառնում, առնում, բառնում
 հոսում,
 խոսում ենք մենք
 յես—դու, դու—նա ու նա...

Ու մենք, ամենքս մեկ,—
 պոետ-պոդպատ-հանձար...

Պոդպատ



հնչուն, հզոր հպարտ
կոնցերտ,—
քաղաքը բնիկ:

Յեւ իմ և քո, նրա
թափը աշխատանքի
խառնում ենք մենք, նրան,
խառնում,
դառնում ենք մեկ
պոետ—քաղաք—յերդիչ,
հզոր ավելի քան
հանճարը յերեկվա...

Ահա յերդում ե նա
դրա-լն, դրա-լն, դրա-լն:
Ահա յերդում եմ սեզ,
լսեք, լսեք, լսեք:

Ահա
մի աժդահա
անիվ—շոքի—պոետ...



ՓՈՂՈՅՆԵՐ

Փողոցներ արձակ, նեղ և ձիգ. փողոցներ հեքոտ, յեռացող,
հանրակառք, կառքեր սթոններ՝ սրընթաց վազող, հեռացող:

Փողոցի մայթեր սալարկված՝ լայնարձակ, յերկար և անձուկ.
անցորդներ հազար հարաշարժ, լրջադեմ, ժպտուն, թեանցուկ:

Ժպտադեմ, խիզախ և շտապ բանվորներ անցնող՝ մարդ և կին,
կյանք տվող կյանքին, որերին. ձուլված փողոցի հուր հեքին...

Դեմ ու դեմ հսկա գործարան՝ միշտ խրոխտադեմ և յեռուն,
ծխնելույզը ձիգ և ըմբոստ յերկնքի ֆոնին սևեռուն:

Սուլիչներ, հինչեր և ինչեր, շշուկներ, կանչեր, յերգ ու զանգ,
պոետ և փողոցն այսորվա, յերկունք ե, ծնունդ և հուզանք...

Սիրտս ձուլեցի փողոցի փոթորկոտ թափին, հեանքին,
ամեն ինչ թվեց ինձ անուշ, ամեն ինչ դյուլթող և անդին:

ՓՈՔՐԻԿ ԹԵՐԹԱՎԱՃԱՌ

Պարտյաշ մաղերով տղա, լճակ աչքերով տղա,
ցուրտ և հազում ևս անվերջ. թշվառ, կը մեռնիս հազեղ.
տոկուն, համարձակ տղա. յեռուն փողոցի տղա,
վազիր ու կանչիր ուժգին. — նոր լուր, հեռագիր, կազենի:

Բոբիկ փաներով տղա, առույդ, կիսամերկ տղա,
արագ անցնում ևս մայթեն. մայթը թնդում և վազեղ.
հալարտ, աշխատող տղա. մրի, զրկանքի տղա,
կանչիր, անցորդին կանչիր. — նոր լուր, հեռագիր, կազենի:

Սիրուն, սրիկա տղա. ծխող, շրջապիկ տղա,
ամենք սիրում են քեզի՝ դյուլթված մանկական հազեղ.
խայթող ու հեզնող տղա. դգվանք անարգող տղա,
թուր, բարձրաձայն կանչիր. — նոր լուր, հեռագիր, կազենի:

Փոքրիկ, տաս տարու տղա, ըմբոստ, մաքառող տղա,
քրտինք հոսում է ճակտեղ, այտեղ ու փոշո՛ւտ մազեղ.
փողոց քնացող տղա, անկյուն կուչ յեկանժ տղա,
կանչիր, քնիդ մեջ կանչիր.— ցուրտ է, մրսո՛ւմ եմ... կազե՛թ:



ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

Հեղեղի պես յեկանք այսոր՝ փողոցելու փողոցը մեծ, —
մեր մանկության որրանը հին, ուր մայրը մեր մեզի ծնեց...

Փողոցներից այս պերճափառ, փոլոր ու ձիղ, լայն և անձուկ՝
քայլում են այժմ շարճերը մեր՝ ձուլված իրար ու թեանցուկ...


Մոռացումի փոշիներին հանձնեցինք մենք ցամփե ու կական,
հզո՛ր և մեր հերթը ներկա, փոթորկածին ու մոգական...

Ու կանչում ենք ովկյանների յեզերքներից գեպի յեզերք,
— յես, դու և նա, — ամենքս մեկ, մեր հայրենիքը — տիեզերք...

Ու բյուր անգամ հազար-հազար, հազար անգամ հին հին որից,
հին դարերի ճամբուփն յեկանք, յեղել ենք մենք և կանք նորից...

Այսուր մերն են արևը վառ, մայիսյան վարդ կարմիր և ալ
չորս ծեղերի հովերի հետ ուղուժ ենք մենք յերգել, հանլ...

Հայացքը մեր արևներին՝ այսուր իջանք փողոցը մեծ,
ուր մայիթերի վրա յերեկ մայր զրկանքը մեզի ծնեց...



ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ

(Քաջկերպ)

Մենք միշտ յեղել ենք կո՛ւռ և կանք մենք.
 հին դարերի ճամբով յեկանք մենք.
 վոր տանք մենք
 հոր լույս:

Գվարդիա!

արևի պես փայլիլ միշտ,
 շարքերով խիտ քայլիլ միշտ
 մեկ—յերկո՛ւ,
 մեկ—յերկո՛ւ:

Յե՛վ ո՛վ և չ'դիտե՛ թե ո՛վ ենք մենք.
 թի՛ռ սավառնակի թևո՛վ ենք մենք.

ծով ենք մենք
ծփուն, ծովի:

Գլարդիա!

արևի պես փայլի՜ր միշտ,
շաբթերով խիտ քայլի՜ր միշտ
մեկ—յերկու,
մեկ—յերկու:

Դե, առանձ միշտ, առանձ. հանդի ենք մենք.
չար բռնության գլխին լսիստ ենք մենք.
բախտ ենք մենք
վաղվա վառ:

Գլարդիա!

արևի պես փայլի՜ր միշտ,
շաբթերով խիտ քայլի՜ր միշտ
մեկ—յերկու,
մեկ—յերկու:

Մենք հղոր ենք, հոր ենք, ջահել, վան.
 դեպ վեր ենք բռնել մենք ջահել վան.
 պահել վան,
 վեր ջահել:

Գվարդիա!

արևի պես փայլիլ միշտ,
 շարքերով խիտ քայլիլ միշտ
 մեկ—յերկու.
 մեկ—յերկու:



ՆԱՎԱՍՏԻՆ

Նաւաւաւին ճամբորդ
հորձանուտ ծովում՝
գիշերումն ամպոտ
առաջ ե լողում:

— Հէյ, կայ փոր տսեմ,
հանդուգն ուղևոր,
յերկինքը՝ նսեմ,
շուրջը՝ ահափոր:

Շատեր գնացին
ու յետ չ'դարցան.
անդարց մնացին
խափարումն անձայն:

Շատերը՝ երեկ,
 ամիսս, դու ել վաղ...
 Նավակըդ անդեկ
 ճոճվում ե, ավանդ:

Դարցիր, նավաստի՛,
 ծովը՝ բարբարոս.
 տեղըդ չես հասնի,
 ուղին՝ անփարոս...

Այն սվ ե, այն սվ,
 թիերը ձեռքում,
 բարձրահունչ ձայնով
 կանչում ե, յերգում.

— Թող ծովը հորդի,
 մահերգներ փռնա.
 յես—ծովու վորդի՝
 ել յես չեմ դառնա:


Ծովում խուժ ու խոր՝
 տարերք ու ցաւում,

հորձանք ու ժրխոր
ինձ յերգ են ասում:

Շառաչող ծովում
լողում եմ, վազում,
պայքարի բովում
բազուկս եմ մարդում:

Ու թե մահանամ
մրրիկ որերին,
ճամբա կը բանամ
դալիք նորերին...

Հողմեր բարձրացան,
նավակը՝ անհետ...
ալիք յետ դարցան
ու նա չ'եկավ յետ...:



Ա Ռ Ա Ջ

Լարված են ոլտուտակներն ամեն,
 անիմները՝ յուզված,
 մաշինի հնուցը՝ թեժ կրակ,
 մեքենավար, առանջ:

Ու զընդաց զանգը յերեք անգամ՝
 կայարանում ժխոր,
 շշտիլը ճշաց յերկար ու ձիգ,
 մեքենավար, առանջ:


Մեր ճամբան այժմ ուղղաձիգ, անծիր, —
 զույգ յերկաթե դեռ,
 վազոններն իրար կապած՝ թույրու,
 մեքենավար, առանջ:

«Յերևան» կայարանը հիմի՝
մեծ շղթայի մի ծայր,
տար, կապիր դու Համբուրգի նավին.
մեքենավար, առանջ:

«Յերևան» կայարանից բարև՝
կայարանին «Մոսկով».
Մոսկովն ու Մադրիդ իրար ձուլենք,
մեքենավար, առանջ:

Աշխարհը մի բուլվար ենք շինել, —
իրար կպած տներ.
Բարև տանք ամեն դռան, անցնենք,
մեքենավար, առանջ:

Շտրեվար վազոնաշարք — մաշին,
մենք վազոնում նստած,
դե, թույրու հրձիգներին հեռու,
մեքենավար, առանջ:



ՇՈՒԿԱՌԲ

Սահմաններ չունի հիմա աշխարհը՝ նոր և, անծիր.
 Շոքեկանք,
 շնչիր,
 շաչիր,
 սլացիր,
 սուլիր,
 անցիր:

Գծերդ՝ յերկաթ յերկու, ափերից յերկրի մինչ ափ՝
 աշխարհին սփռում նոր հույզ, մի լեզու, մի դարկ, մի չափ...

Յերգում ես ձայնովդ զիլ՝ նոր յերգեր, նոր բան և հանդ
 դու կերտող կենցաղը նոր, դու արվեստ, խոկում, հեանք...

Շոքեկանք,
 շտապ,

շտապ.

սլացիր,

սուրան,

սուլիր.

տիեզերքն ողակ ողակ շղթայիր, իրան ձուլիր:

Գետակի կամուրջն ահա: Գյուղականներ լեռան լանջին,
վոր շփոթ, հեզ ու խռով՝ գերի յեն քո սեզ կանչին...

Արևմտ ժայռերն ահա: Հանքերի խորունկ թերթեր,
կրճաբաց մարդիկ մրոտ ու նրանց խրխտա յերթեր...

Դե, անցիր յերկրից յերկիր, դե վազիր գեպ նոր յերկիր,

շոքեկանք,

շարժվիր,

շիտակ.

սլացիր,

սուլիր

յերգիր:

Վողջուն տուր ճիշովըդ սուր՝ քաղաքին փարթափ ու ժիր.
ու տիտան մարդկանց սրտից ներս սողա ու ներս խուժիր...

Ու վառիր ածուխ ու բոց՝ խորախոր նրանց հոգում,
 թող նրանք ըզգան, ապրեն գալիքի խինդն ու խոկում...

Շոքեկանք,

շնչիր

շաշիր.

սլացիր,

սուլիր,

անցիր.

սահմաններ չունի հիմա աշխարհը՝ նոր և, անծիր:

1317
 ◀—▶

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

Կանգնել ես այսօր խրոխտ, տիտանի նման, վեսկամ.
հազել ես շողշող շորեր՝ ալ ու վառ, բոցով վառված.
տվել ես հին հուշերիդ մահատու վերջին հարված.
և հիմի ուժգին կանչով կանչում ես. — տեսեք, յես կամ:

Գլխարկըդ թեք ես դրել ու վրան առադեր հրթև.
թևերդ վեր ես քշտել, իջել ես կյանքի կրկես.
կենսատու ջուր ես հորդուն՝ սրտերին տալ ու հրկեզ,
կարմրաշող հուր ես հիմա և համակ բոց ու հրդեհ:

Բացել ես սահմաններդ աշխարհի հեռվի հեռուն,
ձուլվել ես հոգով, տոկով՝ աշխարհի շաշող շնչին.

քանդել ես Մասիսը հին՝ առասպել չար ու չնչին,
ու հիմա վարպետ վեպում ժայթքում ես լավա յեռուն:

Յեւ յեթե ցանկատ հիմա՝ արևը յերկնի ծոցից
կը պոկես բազկովըդ կուռ, կը փռես յերկրի վրա,
արևի արու զավակ դո՛ւ, սերված ցեղից նրա՝
մութ խորշերն ու խավարներ կը շողան քո թեժ բոցից...

Դարբիններ բրոնզաբազուկ, աժդահա և հրաշվի՝
զարնում են մուրճով հզոր՝ զնդանիդ, մեծ դարբնոց,
դարբիններ ալ-աստղափառ՝ բոցել են քո բորբ հնոց
ու կերտում նոր գործիքներ, վոր Չարը անդարձ խաշվի:

Կանգնել ես այսոր խրխուտ, տիտանի նման, վեսկամ.
հազել ես շողշող շորեր՝ ալ ու վառ, բոցով վառված.
տվել ես հին հուշերիդ մահատու վերջին հարված.
և հիմի ուժգին կանչով կանչում ես. — տեսեք, յես կամ...

26-Ը

(26 կոմունարների հիշատակին)

Ո՞վ կարող է հավերժությունը թաղել.
ո՞վ կարող է անմար Արևը քաղել...:
Անապատում, թե ծովերում, ցամաքում՝
արփի-շողեր ողջ աշխարհն են համակում:
Ո՞վ կարող է հավերժությունը թաղել:

Ու սրեցին բյուր դաշույնները հատու,
վոր խոցոտեն Արևի սիրտը բոցի.
դաշույնների հարվածներով մահատու
ո՞վ կարող է Արևի սիրտը խոցի:

Անապատի ավազներում հողմածեծ՝
արևների ցուլքերը շեկ են դառնում,

ալ Արևն էր, վոր անապատը թացեց
և մրրկվող ավազն իրար ե խառնում...:

Ո՞վ կարող ե հավերժությունը թաղել.
ո՞վ կարող ե անմար Արևը քաղել...:
Անապատում, թե ծովերում, ցամաքում՝
արփի-շողեր վողջ աշխարհն են համակում:
Ո՞վ կարող ե հավերժությունը թաղել:



ԱԼԻԲ

Ուռչում ե, թռչում ե Ալիքը,
խուլթերն ու մոլթերն ե հերկում:
Յերկնում ե, ծնվում ե Գալիքը,
կյանքին նոր իմաստ ե յերգում:

Շաչում ե, կանչում ու հնչում ե
Ալիքը,— փովում ե հեռուն:
Աշխարհը թռփում իր շնչում ե
մրրիկ ու ցասումը յեռուն...

Կիզող ե տապոմն իր. թափոմն իր՝
Ալիքը— հզոր մի հովանդ:
Ցրում ե, խրում ե ծափոմն իր՝
Ժայռերը, խիճերն ու ավանդ:

Հալանք ու ծփանք և ժխտ Էն
 յերկիրը—ափերը արար:
 Որերն այս շաշոյ ու խոտ Էն,—
 հեղեղ և հորձանք Էն վարար...

Ուռչում Է, թռչում Է Ալիքը,
 հալարտ և անպարտ ու թափով:
 Ծնվում Է, կարմրում Է Փալիքը՝
 յեկեք տանք փողջուն մենք ծափով:



ՅԵՆԵՔ

Յերկինք-դարբնոցումն արդեն
արև-հնոցը բոցվեց...

Արար աշխարհի վրա
ճշում են շշակներն ամեն.
— դե, յելիր, յելիր, յելիր:

Ծխնելույզները վերձիդ՝
մեր հողիների նման,
ծխում են, ծխում ծալ-ծալ:
Ծխնելույզները վերձիդ
հաղթ բանվորների նման՝
սևահեր,

խոժոռ
ու վես
արևին կանչում.
— յելիր:

Հիմի, այս ժամին, հիմի
մոտիկ թե հեռու հեռվում,
շշակի կանչին ունկրնդիր՝
բյուր հազար սրտեր մեկանց
զարկում են,
ուռչում,
յեռում...

Նոր աստվածների խմբեր
խոլժում են աներից փողոց,
քայլում են գեպի զավոդ,
ծովափեր,
խորքեր յերկրի,
լեռների կրճքեր ճեղքված,
ձուլվում են յերկրի ջղին:

Ու զարկով, զարկով, զարկով
կռուժ են հեքյաթ մի նոր,—
վողջ տիեզերքի համար
մի наркомтруд հոր...

Լինի, թող լինի, լինի
յերգս թող հզոր լինի.
մուրճերի զարկի նման
թող զիլ զըրնգն, զնգն
աշխարհ—զնգանի վրա:

Յերգս թող լինի, լինի
արև—հնոցի նման,—
վոր փռի շող ու հրդեհ
խուլ խոռոչներում կյանքի...

Յերգս թող լինի, լինի
վառոդե պատրույգ պայթող,
վոր խոցի կուրծքը ժայռի,—
յերկաթ գծերի ճամբա...

Արար աշխարհի վրա
ճշում են շշակներն ամեն. —
իմ յերգը գնդուն զանգով,
իմ յերգը հնչուն հանգով
Թող գնդա, գնդա, գնդա.
— լուսացավ,
յեկեք, յեկեք...




Մ Ե Ն Ժ

Մենք նոր ենք, մենք պոետներ ջահել,
մեր մուսան ելեքտրիկն է, շոքին.
բռնել ենք արևավառ ջահեր
ու վառում տիեզերքի հոգին:

Յես մենակ ի՞նչ եմ հիմի.— չնչին.
մենք ամենքս մեկտեղ,— հզոր մի տակ,
մեր հազար ու բյուր հազար շնչին՝
մի լեզու, մի զարկերակ, մի թոք...

Բեթհովեն մի ստվեր է անուժ
մեր վաղվա յերգերի դեմ հսկա.
կը հնչի վաղը մեր յերգն անուշ,
աշխարհը հուզանք ու զանգ կըզգա...

Մենք նոր ենք, մենք պոետներ ջահել,
մեր մուսան ելեքտրիկն է, շոքին.
բռնել ենք արևափառ ջահեր
ու վառում տիեզերքի հոգին...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ Հ. [ՀԱԿՈԲՅԱՆԻՆ. — ԶԱՆԳԱՐ. — ՈՂԻ-
ՆԵՐԻ ՎՐԱ. — ԴԱՐԲԻՆՆԵՐ ԵՆԲ ՄԵՆԲ. — ԲԱՂԱԲ. ՓՈ-
ՂՈՑՆԵՐ. — ՓՈԲՐԻԿ ԹԵՐԹԱՎԱՃԱՌ. — ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ. —
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ. — ՆԱՎԱՍՏԻՆ. — ԱՌԱՋ. — ԾՈ-
ԲԵԿԱՌԲ. — ՀԱՅ. ՍՈՑ. ԽՈՐՀ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. —
26-Ը. — ԱԼԻԲ. — ՅԵԼԵՖ. — ՄԵՆԲ. —



50 ԿՈՊԵՅ ԶԵՐՎՈՆԵՑ

ՀՀ Ազգային գրադարան



NL0367774

